ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ № 2. ՄԱՐՏ, 1894.

ՀԱՄԱՅՆՔ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿՈՉՈՒՄԸ

—

Ներկայ յօդուածով մենք չենք կամենում քննութեան ենթարկել Հայաստանում տիրող այժմեան վարչական կարգերը, որոնք արդէն հազար անգամ կրել են զանազան քննադատութիւններ։ Հարստահարված հայ ժողովուրդը այսօր մի արիւնաթաթախ յեղափոխական է, նա զգացել է ներկայ կառավարութեան ինչ լինելը եւ յեղափոխական գործունէութեամբ բողոքում է այդ կարգերի դէմ։

Յուսահատված հայը ինքնիրենը նետել է փոթորկալից եւ արիւնահեղ յեղափոխութեան ասպարէզը. նա գոռում, գոչում է ազատութիւն եւ այդ ցանկալի ազատութեան համար զոհում է տուն, տեղ, ընտանիք եւ կեանք։

Բայց ո՞րն է այդ ազատութիւնը։ Արդեօ՞ք մի հայկական կառավարութիւն, լինի դա միապետական կամ հանրապետական։ Ո՛չ, — դրա ազատութիւն չկն, այլ ազատութիւն եւ երջանկութիւն բառերով համեմած երեւակայական ցնորքներ։ Մի կառավարութիւն՝ լինի դա ազգային կամ օտար միշտ թշնամի է ազատութեան։ „Կառավարութիւնն եւ ազատութիւնը իրար հակասում են“, ահա մի անհերքելի ճշմարտութիւն։ Եւ իրաւ, ոմանց մի կառավարութիւն, լինի դա միապետական կամ սահմանադրական, հանրապետական կամ աղնուապետական՝ միայն արտաքին ձեւերով են տարբերվում միմեանցից, իսկ իրենց ներքին էութեամբ եւ կոչումով միեւնոյն են։

Քննենք այժմ թէ ինչո՞ւմն է կայանում բոլոր կառավարութիւնների էութիւնը եւ կոչումը։

Այս հարցին պատասխանելու համար պարտաւոր ենք մի պատմական հայացք ձգել կառավարչական կարգերի ծագման վրայ։

Ընկերաբանութիւնը (սոցիոլոգիա) ոմանց հաստատ կերպով ապացուցանում է, որ երբ մարդկութեան մէջ երեւան եկան առանձին դասակարգեր, այսինքն կեղեքիչ հարուստներ եւ թշուառ աղքատներ, այն ժամանակ հարուստները կազմեցին մի կառավարութիւն իրենց անիրաւ շահերը պաշտպանելու համար։ Գուստավ Լը-Բոնի նման մի գիտնական, որ ոչ մի յեղափոխական ձգտում չունի, հաստատում է միեւնոյնը հետեւեալ խօսքերով. „Շուտով հարուստները կազմեցին մի առանձին դասակարգ եւ իրենց շահերը պաշտպանելու համար, աղքատ ժողովրդի դէմ օրէնքներ ու կանոններ ոահմանեցին, այսինքն մի կառավարութիւն կազմեցին։“

Էլ կասկած չի մնում, որ կառավարութիւն կոչված այդ դժոխային մեքենան ուղղակի աշխատող աղքատ դասակարգի դէմ է ուղղված։ Սկսած իրենց ծագման օրից միչեւ այժմ կառավարութիւնները միշտ հաւատարիմ են եղել իրենց այդ միակ կոչման, այսինքն՝ պաշտպանել հարուստ կեղեքիչներին աղքատ ժողովրդի դէմ։

Եթէ մի քիչ խորը թափանցենք եւ պաղարիւնութեամբ քննենք կառավարական կազմակերպութիւնը, պոկելով նրա երեսից ռամկավարական կամ հանրապետական դիմակը, որով նա ծածկվում է մի քանի երկրներում, մենք զարմացած կը մնանք, տեսնելով, թէ ինչպիսի մեծ նմանութիւն կայ նոյն իսկ ամենայառաջադէմ ռամկավարական կառավարութեան եւ բացարձակ միապետական կառավարութեան մէջ։

Այն հիմնարկութիւններն, որոնք միասին վերցրած կազմում են կառավարչական մեքենան, ամեն տեղ նոյնութեամբ կրկնվում են, միայն այն զանազանութեամբ, որ ռամկավարական երկրներում նոյն իսկ բանտերի պատերի վրայ փորագրված են «Ազատութիւն, Հաւասարութիւն եւ Եղբայրութիւն» կեղծաւոր բառերը։

Ամեն տեղ ժողովրդի քրտինքով են վճարվում հարկերը, որոնք գործադրվում են կառավարչական մարմինը սնուցանելու համար, որի նպատակն ու կոչումն է ծծել իրեն սնուցանող աղքատ ժողովրդի արիւնը։

Ամեն տեղ ժողովուրդը տալիս է «արեան հարկ», կատարելով զինուորական ծառայութիւնը։ Ռուս զինուորը ի՞նչով պիտի նախանձի ֆրանսիական զինուորներին, որոնք ճանճի պէս կոտորվում են հեռաւոր կղզիներում կառավարութեան շահի կամ քմահաճոյքի համար եւ կամ իտալիական զինուորին, որը ապստամբ ամբոխի վրայ յարձակվելիս, անդիտակցաբար խրփում ու սպանում է իր հարազատ ծնողին։ Ամեն երկրներում աղքատ ժողովուրդը հաց է գոռում։ Քաղցածութիւնը հաւասարապէս իւր

զոհերն ունի թէ Սիցիլիայում եւ թէ Հայաստանում։ Երբ մի քաղցած եւ առանց աշխատանքի մնացած բանւոր մի կոր հաց է գողանում, ամեն տեղ դատարանները նրան պատժի են ենթարկում, մինչդեռ մեծ գողերը եւ աւազակները անպատիժ են մնում, ինչպէս պանամիստները Ֆրանսիայում եւ Մուսա-բէկերը Հայաստանում։

Բոլոր կառավարութիւնները ունեն ոստիկանութիւն, որը ժողովրդի արդար բողոքի ձայնը խեղդելու եւ նրան գնդակահար անելու համար միշտ պատրաստ է։ Ամեն տեղ ոստիկանութեան կատարելագործված զզուելի ձեւը—գաղտնի ոստիկանութիւնը իւր խայտառակ դերն է կատարում։

Մի խօսքով, բոլոր կառավարութիւնները նոյն նպատակն ու նոյն կոչումն ունեն եւ գրէթէ ամեն տեղ նոյն մոլոցներն են գործադրում իրենց նպատակին հասնելու համար։ Ուրեմն շատ հասկանալի է, որ բոլոր երկրներում կառավարչական այդ բարբարոս կարգերը միեւնոյն պտուղն են տալիս, որ է ժողովրդի թշուառութիւնը։

Միայն կարճատեսները կարող են խաբվել եւ չլանալ այս կամ այն կառավարութեան արտաքին ձեւերով եւ խաբուսիկ փայլով, իսկ ինչ վերաբերում է յեղափոխականներին, ճշմարիտ յեղափոխականներին, որոնց նպատակը ժողովրդի բարօրութիւնն է, նրանք գիտեն, որ ներկայի բոլոր թշուառութիւնները վերացնելու համար բաւական չէ փոխել իշխող անհատները կամ վարչական ձեւերը, այլ պէտք է տալ ժողովրդին բացարձակ ինտեգրալ ազատութիւն, որպէս զի կարողանայ իւր աշխատանքի ամբողջ արդիւնքը ապահովութեամբ վայելել, իսկ դրա համար անհրաժեշտ է ամենից առաջ վերացնել այն կազմակերպութիւնը, այսինքն կառավարութիւնը, որի միակ նպատակն ու կոչումն է կեղեքել աղքատ եւ արդիւնաբերող ժողովրդին։

Կառավարութեան աւերակների վրայ միայն թշուառ մարդկութիւնը պիտի կարողանայ գտնել իւր երջանկութիւնը։ Ինչպէս երեւելի աղգագրագէտ Մորգանն ասում է. «Այն ժամանակ տեղի կունենայ նախնական համայնքի իրական ազատութեան, հաւասարութեան եւ եղբայրութեան վերածնունդը։»

—.—

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

I

Հայկական խնդիրը մի երեւոյթ է, որ ունի իւր պատմական եւ ընկերաբանական պատճառները։ Եթէ մենք ուզում ենք հետազօտել Հայկական խնդրի արտադրիչ պատճառները մի որոշ եւ ուղիղ եզրակացութեան հասնելու համար, պարտաւոր ենք հետեւել Ասիայի քաղաքակրթութեան զարգացման զանազան եղանակներին, ուր միայն կարող ենք գտնել այդ խնդրի գոյութեան պատճառները եւ լուծելու եղանակը. իսկ ընդհակառակն, եթէ նկատենք Հայոց հարցը որպէս մի տեղական մասնաւոր եւ ազգային խնդիր մենք բոլորովին թիւր մեկնած կը լինենք նրա աղբիւրը եւ նրա լուծման համար առաջարկելի ծրագրում կ'ընկնենք անհեթեթ սխալանքների մէջ։

Պատմական հին դարերում, երբ Եւրոպան տգիտութեան թանձր խաւարում խորասուզուած էր, արեւմտեան Ասիան փայլում էր իւր քաղաքակրթութեան յառաջադիմութեամբ, որի ապացոյցներն են այն բազմաթիւ տխուր աւերակները, որ այսօր հոյակապ յիշատակներ են համարվում։ Բարբարոս Եւրոպան լուսաւորութեան առաջին ճառագայթները ընդունեց Ասիայից։ Ասիան նրան սովորացրեց պղինձ հալելը, երկաթ դարձնելը, ընտանի կենդանիներ պահպանելը եւ բազմաթիւ բոյսեր աճեցնելը։ Ասիայից տարածվեցաւ Եւրոպական լեզուները, սովորութիւնները, զանազան գործիքներ եւ արհեստներ, ընտանի կենդանիներ եւ ամենաօգտակար բոյսեր, մէկ խօսքով քաղաքակրթութեան եւ յառաջադիմութեան հիմք կազմող ծանօթութիւնները, որոնց մանրամասն յիշատակութիւնը մեզ շատ հեռուն կը տանէր։

Բայց անգութ ճակատագրի անողոք պատահարների չնորհիւ մենք ստիպուած ենք վերստին սովորելու Եւրոպացիներից այն բոյսերի աճեցնելու յարմարագոյն եղանակները, որ մենք էինք նրանց փոխ տուել, այն կենդանիները խնամելու լաւագոյն կերպերը, որ մենք էինք նրանց երկիրը ներմուծել։ Վերջապէս մենք պարտաւորուած ենք դիմել նրանց, ձեռք բերելու համար մարդկային ընկերութեան օգտակար ամեն գիտութիւնները։

Արդարեւ քաղաքակրթութեան հոսանքը, որ արեւելքից դէպի արեւմուտք էր դիմում առաջ, այժմ արեւմտքից դէպի արեւելք է առաջանում հակայաքալ։

Հին Ասիան ենթարկվում է Եւրոպայի քաղաքակրթութեան ազդեցութեան։ Ասիական ծովափնեայ երկիրները օրից օր աւելի ենթարկվում են այդ ազդեցութեան եւ աւելի սերտ կապով կապվում Եւրոպայի հետ։

Եւրոպայի այդ քաղաքակրթութեան հոսանքը սկսել է թափանցել կամաց կամաց եւ երկրի խորքը. ահա այդ հոսանքն է, որ պատրաստում է Արեւելքի վերածնութիւնը—վերածնութիւն, որ պատճառ է լինելու սաստիկ փոթո-

րիկների եւ արիւնահեղ յեղափոխութիւնների, որովհետեւ նա տալու է մահացու հարուածը Ասիայի կեղեքիչների դժոխային կազմակերպութեան։ Ամեն ժողովուրդ իր յարմարութիւնների եւ իրան շրջապատող հանգամանքների նեղածին չափ ենթարկվել է այդ քաղաքակրթիչ հոսանքին եւ յառաջադիմել։ Այդ յառաջադիմութիւնը երբեմն կատարվում է կամաց եւ աստիճանաբար, որով խուսափում է մեր ակնարկից. բայց եւ այնպէս ամեն տեղ կայ մի իրական յառաջադիմութիւն։

Ասիոտիզմով խօսքերնիս հայերի մասին, մենք տեսնում ենք ահագին փոփոխութիւն, անհուն տարբերութիւն մեր այսօրուայ վիճակի եւ այն վիճակի մէջ, ուր գտնվում էինք սրանից ոչ միայն հարիւրաւոր, այլ մի քանի տասնեակ տարի առաջ։

Հայն ունի այսօր իւր գրականութիւնը, իւր մամուլը, որ մատակարարում է նրան եւրոպական քաղաքակրթիչ գաղափարները. նա ունի իւր ուսումնարանները, որոնց թիւը օրից օր աճում է եւ որոնք եւրոպական մեթոդներով զարգանալու վրայ են անընդհատ. Պանդիտութիւնը նոյնպէս մի քաղաքակրթիչ դեր է խաղում հայերիս կեանքում։ Մայրաքաղաքների եւ օտար երկրների հայ մշակները վերադառնալով հայրենիք, տանում են իրենց հետ նոր հայացքներ, նոր գաղափարներ։ Եւրոպայի հետ մեր ունեցած վաճառականական յարաբերութիւնները եւ նրանց արդիւնաբերութեանց մեզանում մուտք գործելը տակն ու վրայ է արել մեր առօրեայ կենցաղավարութիւնը. մեր ճաշակը նրբանում է եւ մեր պահանջները աւելանում են օրից օր, թէպետ նրանց բաւականութիւն տալու միջոցները գոյութիւն չունեն։

Մի քանի հեռագրական թելեր, սակաւաթիւ խճուղիներ ծառայում են մեր երկրին, դիւրացնելով յարաբերութիւնները եւ արագացնելով նրա նախկին կեանքի յեղաշրջումը։

Վերջապէս յեղափոխական պրոպագանդան, որ երթալով զարգանում է եւ տարածվում, մի ահագին դեր է խաղում հայ ժողովրդի կեանքում։ Կենդանի ձայնը միացած տպագրական խօսքի հետ, կերպարանափոխում են ժողովրդի մտաւոր աշխարհը։

Չը կարծուի որ մենք լաւատես ենք կամ գոհ տեղի ունեցած յառաջադիմութիւնից։ Մենք շատ լաւ գիտենք, որ մեր գրականութիւնը, առաջին՝ պէտք եղած ծաւալը եւ բարձրութիւնը չունի եւ երկրորդ, որ աւելի գլխաւորն է, ժողովրդի մեծամասնութիւնը չի օգտվում նրանից. էլ չենք ուզում խօսել բռնաւորների եւ հարստահարիչների ոտքերը լիզող ստրաքարշ թերթերի մասին։ Մենք ամեն օր տեսնում ենք որ մեր գրագիրները թէ իրենց թւով եւ ուղղութեամբ ժողովրդի պահանջներին բաւականութիւն տալուց շատ հեռու են, եւ մեր արդիւնաբերող ժողովրդի մեծամասնութիւնը գրելկարդալ չի իմանում։

Մենք համոզուած ենք, որ Եւրոպայի հետ հայերի ունեցած վաճառականական յարաբերութիւնները մի նոր միջոց են դարձել հարստութիւն դիզելու համար իրանց խղճմտանքը ծախող հայ եւ եւրոպացի չարչիների կեանքում։

Այն մի քանի հեռագրական թելերը եւ ճանապարհները պատերազմական նպատակով շինուած լինելը շատ լաւ գիտենք. գիտենք եւս, որ մեր թշնամին մեզ ճնշելու եւ մեզ կողոպտելու համար օգտվում է այն թելերից եւ ճանապարհներից հրացան ու փամփուշտ փոխադրելով Կարին, Աւաշկերտը գնդակի տեղատարափի բռնելու, թնդանօթներ քաշ տալով Սասունը ռմբակոծելու համար։

Վերջապէս մենք գիտենք, որ մեր ժողովրդի զանազան նախապաշարումները դեռ կենդանիեն եւ ստրկական ոգին դեռ տիրում է նոցա սրտին։

Այո՛, մենք գիտենք այս բոլորը, բայց եւ այնպէս ուրախութեամբ նկատում ենք այն փոփոխութիւնը, այն շարժումը, որ սկիզբն ու ընկրկնապատճառն է հայ ժողովրդի վերածնութեան։

Այդ փոփոխութիւնը, այդ շարժումը քիչ թէ շատ մենք տեսնում ենք արեւմտեան Ասիայի ուրիշ երկրներում եւս։

Արեւմտեան Ասիայի վերածնումը մօտալուտ է։ Մի ահռելի յեղափոխութիւն, որ պիտի պայթի Օսմանեան կայսրութեան գլխին, պիտի ծնի այդ խարխուլ պետութիւնը կազմող բոլոր ազգերի եւ ժողովուրդների ազատութիւնը։ Արեւելեան խնդիրը, որ Եւրոպայի պետական մարդոց ուղեղը այնչափ յոգնեցնում է, տոց ոչ մի լուծում, ոչ մի ելք չունեցաւ, պիտի լուծուի ընկիկ ազգերի ձեռքովը։ Մի ահագին յեղափոխութիւն պիտի փչրէ այդ Կորդեան հանգոյցը եւ բացարձակ ազատութիւն պիտի շնորհէ այդ հանգոյցով կաշկանդուած բոլոր ժողովուրդներին։

Եւրոպայի քաղաքակրթիչ հոսանքի ազդեցութեամբ սկիզբն առաւ այդ շարժումը, ինչպէս ուրիշ ժողովուրդների, նոյնպէս եւ հայ ժողովրդի սրտում. այդ հոսանքի ազդեցութեամբ հայ ժողովուրդը քայլում է դէպի յեղափոխութիւնը, որը ուրիշ նպատակ չունի, եթէ ոչ՝ տնտեսական բացարձակ ազատութիւն, որը միակ իդեան է եւրոպական քաղաքակրթիչ հոսանքի։

(Շարունակելի)

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Եթէ մի ընդհանուր հայեացք ձգենք զանազան երկրների յեղափոխական շարժումների վրայ, սկսած քաղաքակրթեալներից մինչև բարբարոս Թիւրքեան և եթէ քննենք զանազան յեղափոխական շարժումները մի ընդհանուր եզրակացութեան գալու համար, կամայ ակամայ պէտք է ընդունենք, որ բոլոր շարժումների պատճառները միևնոյնն են:

Քաղաքական ճնշումներ, տնտեսական սընանկութիւն, աղքատութիւն, ծանր հարկեր, միլիտարիզմ, և այլն... ահա այն պատճառները, որ ամեն տեղ, ամեն երկրում, հասարակ ժողովրդին մղում է դէպի յեղափոխութիւն: Քանի դեռ գոյութիւն ունեն բոլոր այդ պատճառները, յեղափոխական շարժումները չեն խոնարհվիլ կառավարութիւնների վայրենի հարուածների առաջ, այլ ընդհակառակը՝ աճելով վերջ ի վերջոյ տեղի կը տան մի ընդհանուր միջազգային յեղափոխութեան և ճընշուած ու սովատանջ ժողովուրդը թօթափելով բռնապետների լուծը՝ ձեռք կը բերէ հաց, ազատութիւն և մարդավայել կեանք վարելու իրաւունք:

Միջազգային յեղափոխական շարժումը լաւատեսների ցնորք չէ. ամեն տեղ, ամեն երկրում, գիտակցաբար, թէ անգիտակցաբար հասարակ ժողովուրդը ձգտում է նրա իրականացման: Նայած շրջապատող պայմաններին՝ մի երկրում գործունէութիւնն ստանում է հասարակ ցոյցերի ձև. մի ուրիշ տեղ գաղտնի ընկերութիւններ են հիմնվում յեղափոխական նպատակով, մի այլ երկրում բացարձակ ապստամբութիւն է ծագում, տարածվում ու ընդհանրանում ամբողջ նահանգներում: Իսկ երբեմն գործունէութիւնը անհատական ձև է ստանում, ուր անձնուրաց անհատները իրենց զոհում են հասարակական շահերին:

Մերձ ի մահ կառավարութիւնները վիրաւոր գազանի պէս, զգալով իրենց մօտալուտ վախճանը, սարսափելի հարուածներ են տեղում յեղափոխական ժողովրդի գլխին: Նոքա կուրացած չեն նկատում, որ իրենց հարուածները ապարդիւն, անզօր են ճնշելու, ջախջախելու յեղափոխական յառաջադիմութիւնը:

Կառավարութիւնները ոչ թէ միայն անկարող են ճնշել այդ շարժումները, այլ նոյն իսկ նպաստում են նրա զարգանալուն: Փոխանակ շարժման դրդիչ պատճառները վերացնելու և ժողովրդի վիճակը բարելաւելու, ընդանք աւելի վատթարացնում են ժողովրդի վիճակը, բարդելով զանազան հարկեր և այլն: Օրինակ, վերջերս Ֆրանսիայում ցորեն ներմուծելու մաքսը բարձրացրին, Իտալիայում աղի տուրքը աւելացրին, իսկ Ռումանիայում հարկ են դրել տան քացախեղէնների վերայ, որոնցով կերակրվում է գլխաւորապէս հասարակ ժողովուրդը: Որքան զօրեղանան շարժման դրդիչ պատճառները, աւելի ևս կը զօրեղանան յեղափոխական շարժումները և վերջ ի վերջոյ ընդհանուր սօցիալական յեղափոխութիւնը վերջ կը դնէ ներկայ բոլոր թշուառութիւններին:

Քիչ թէ շատ հեռատես մարդիկ, հիմնվելով իսկ այս քանի ամսուայ շարժումների վրայ, գուշակում են, որ մօտալուտ է այն ցանկալի օրը, երբ սօցիալական յեղափոխութիւնը կը ոչնչացնի ներկայ հասարակական կեցութեան հիմքը և կը պատրաստէ մի նոր երջանիկ կեանք համայն մարդկութեան համար:

ԹԻՒՐՔԻԱ

Տաճկահայաստանի ամեն մի ծայրից սարսափելի լուրեր են գալիս այնտեղ տիրող սովի մասին: Սովը սկսվեց Կարնոյ նահանգից. նա տարածվել է, և այժմ ամբողջ Կարնոյ դաշտը, Ալաշկերտը, Վանը իր շրջականերով, Տարօնը, մի խօսքով բոլոր հայաբնակ կենտրոնները ենթակայ են այդ տղէտի սոսկալի հետևանքին:

Յուսահատ հայը սկսել է արդէն գաղթել. Կարնոյ Դաշտից, Ալաշկերտից 2000-ի մօտ հայ ընտանիքներ թողել են հայրենիք և գաղթել զանազան կողմեր, մեծ մասամբ Կովկաս, ուր սոված, ծարաւ, մերկ, բոբիկ թափառում են քաղաքից քաղաք, գիւղից գիւղ:

Իսկ տաճիկ կառավարութիւնը երկար ժամանակ աշխատեց ծածկել սովը. լրագրներին արգելեց որ և է բան գրել և մինչև իսկ ստիպեց հերքել արտասահմանեան լրագրների հաղորդածները սովի մասին:

Սակայն ծածկել այլ ևս անհնարին էր, և նա ստիպված էր վերջ ի վերջոյ յայտնել պաշտօնապէս, թէ սով կայ և "օգնութեան հասնել տառապեալ ժողովրդին" ճանապարհ գցելով սովատանջ նահանգները ցորենի մի աննշան քանակութիւն:

Այո՛, թոյլ է Սուլթանը, երբ պէտք է իր ժողովրդի տանջանքին դարման անել, երբ պէտք է նրան սովամահ լինելուց ազատել: Սակայն թոյլ չէ նա, երբ բանը գալիս է հարկեր հաւաքելուն, սովատանջ ժողովրդի արեան վերջին կաթիլը ծծելուն և մանաւանդ՝ յեղափոխական այս կամ այն շարժումը զսպելուն:

Վանում փօլիս Նուրիի սպանութեան գործի առթիւ ահագին քանակութեամբ երիտասարդ ոյժեր բանտում փթացնելուց, անասելի տանջանքներ տալուց, մի քանիսին նահատակելուց յետոյ, տաճիկ բարեխնամ կառավարութիւնը հրապարակօրէն կախեց վերջապէս ՄԱՆՈՒԿ ՇԱՏԻՈՐԵԱՆԻՆ, իբրև սպանութեան իսկական հեղինակին:

Եօզգադում մի հայ սպանել է իրեն հալածող փօլիսին, որի պատճառով կառավարութեան դրդմամբ տաճիկ ամբոխը յարձակվել է անզէն հայերի վրայ, սպանել է 100 հոգի, վիրաւորել 150: Տաճիկներից սպանվել են 3, վիրաւորվել 8 հոգի:

Ամասիայում մի հայ լրտես է սպանվել. 28 հայ բանտարկված են դորա առթիւ:

Սիվաս նոր խռովութիւններ են պատահել. Պոլսից յատկապէս մի կօմիսար է գնացել դորա համար:

Կրէտա կղզում Սուլթանը հրամայեց կախել 5 յոյներ, ներելով նրանց հետ դատապարտված մահմեդականներին: Դորա փոխանակ, մի քանի օրից յետ ծառերից կախած տեսան երկու մահմեդականների դիակներ: Դրան հետևել է բազմաթիւ ձերբակալութիւններ:

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Մեծաքանակ ձերբակալութիւններ են տեղի ունենում ամեն տեղ, մանաւանդ Պետերբուրգում և Մոսկվայում:

Տօմսկում (Սիբիրում) բազմաթիւ ստարօվերցիներ(աղանդաւորներ) են ձերբակալվել:

Վարշավայում ոստիկանութիւնը մի յեղափոխական ընկերութիւն է գտել ռումբեր շինելիս մի վանքում: Յեղափոխականները ընդդիմադրել են: Սպանված են նրանցից 3, իսկ ոստիկաններից 2 հոգի:

Զարխի անունով մի յեղափոխական սպանվել է Բալտեան գաւառներից մէկում, ժանդարմներին ընդդիմադրութիւն ցոյց տալու ժամանակ, երբ եկել էին իր բնակարանը խուզարկելու:

Կաղզուանի գաւառապետը, լսելով որ իր օրերը հաշված են և պիտի շուտով հեռանայ այդ իր ոսկետու պաշտօնատեղից, ուր երկար ժամանակ քիւրդ աւազակների բոլոր գողութիւնների գողակից ընկերն էր,- մի ստորագրութեան թերթ է ման ածում, խաբելով միամիտ գիւղացիներին, թէ ձրի ալիւր են բաժանելու բոլոր ստորագրողներին: Տեղում տիրում է հացի թանկութիւն, այգեգործ ժողովուրդը քաղցած է: Ստորագրում են, բայց այ քեզ բան, թղթի բովանդակութիւնն է. "Երկնուց գետին շնորհակալ ենք մեր Դրաչօվից և այլն..." Ռուսաստանում ամեն ինչ հնարաւոր է, այն էլ յետ ընկած անկիւններում:

Մօտ օրերս նոյն Դրաչօվը(Կուկոնեանի դատի բոլոր ֆալսիֆիկացեայի հեղինակը) հրամայում է հայոց եկեղեցու զանգակները խփել տալ, հրաւիրել հասարակութեան և յայտարարել, որ դէպուտատ ընտրեն: Ժողովուրդն աղմուկ է հանում եկեղեցում և դուրս գնում, որովհետև արդէն մի տարի առաջ ընտրված դէպուտատ կայ տեղում:

Գաղտնիքը նրանումն է, որ եղած դէպուտատը հարուստ և նիւթապէս անկախ մարդ լինելու պատճառով՝ խանգարում է Դրաչօվի մուռտառ ձեռքերին հասարակական փողերի արկղը մտնելը:

Վերջին տեղեկութիւնների համեմատ Դրաչօվն արդէն հեռացրած է իր պաշտօնից: Հաստատված է, որ արքունական դանձարանից գողացել է 4500ր.

ՖՐԱՆՍԻԱ

—

Ֆրանսիական կառավարութիւնը մրցում է Սուլթանի հետ յեղափոխականների դէմ ուղղված կատաղի հալածանքներով: Լաւ հասկացած լինելով, թէ ինչ աստիճան ճշմարիտ են Վալեանի խօսքերը, երբ նա ասում էր, թէ "իմ ռումբի պայթումը միայն ապստամբ Վալեանի աղաղակը չէ միայն, այլ ամբողջ բանւորական աշխարհի, որը պահանջում է իր իրաւունքները և շուտով կը միացնէ գործը խօսքի հետ", կառավարութիւնը պատերազմ է յայտարարել ոչ թէ առանձին անհատներին, ոչ թէ մասնաւորապէս մի որ և է կուսակցութեան, այլ ամբողջ բանւոր դասակարգին: Խուզարկութիւնները հազարներով են անվում և յունվարի 1-ին միայն 2000-ից աւելի խուզարկութիւններ տեղի ունեցան միաժամանակ ամբողջ Ֆրանսիայում: Այդ, մարդ պէտք խոստովանվի, որ "քաղաքակրթեալ" կառավարութիւնները այն միակ առաւելութիւնն են ներկայացնում, որ միջոց և կարողութիւն ունեն այդպիսի գործեր կատարել: Հերբակալութիւնները կանոնաւորապէս ամեն օր շարունակվում են. դրանց թիւը մօտաւորապէս հաշվել անգամ անհնարին է. առանց որ և է պատճառի, լոկ առաջադէմ գաղափարներ ունենալու համար կամ մի հասարակ կասկածի պատճառով բանտարկում են ընտանիքի տէր բանւորներին և մինչդեռ տղամարդիկ բանտումն են, կինն ու երեխաները քաղցած ու ամենայետին թշուառութեան մէջ են մնում: Այլ ու ձախ անարդար դատապարտութիւններ են կատարում. օրինակ, Ժան Գրավին երկու տարով բանտի դատապարտեցին մի գրքի համար, որ մի տարուց ի վեր ազատ կերպով վաճառվում էր գրավաճառանոցներում. օտարահպատակներին աքսորում են և չնայած այս բոլորին... ռումբերի պայթումները շարունակվում են: Ճիշդ է, այդ պայթումներից մի քանիսը որոշ նպատակ չեն ունեցել, ուղղված չեն եղել անմիջապէս քաղաքական ճնշումների և տնտեսական կեղեքումների դէմ, ինչպէս պէտք է լինեն, բայց և այնպէս նրանք սարսափ են ազդում հարուստ դասակարգերի և կառավարութեան վրայ և աւելի լաւ ապագայի յոյսը վառում բանւորների սրտում:

ԻՏԱԼԻԱ

—

Յեղափոխական հողմը, որ փչում է ամբողջ Եւրոպայի վերայ, աւելի խիստ է Իտալիայում, քան որ և է ուրիշ երկրում: Իտալիան, որ Եւրոպական երկրներից ամենավերջինը արաւ ազգային յեղափոխութիւնը, այսօր միւսների առաջն է անցնում սոցիալական յեղափոխութիւն անելու: Այս սիրուն երկիրը, որ մի ժամանակ մի մեծ պարտիզի էր նմանում, այժմ մի ամայի անապատ է ներկայացնում իր կղերական և քաղաքական բռնապետների շնորհիւ:

Երբ Յունվարի սկզբներին կառավարութիւնը ապստամբ Սիցիլիայում պատերազմական դրութիւն յայտարարեց, ամբողջ Իտալիայում ժողովուրդը սկսեց համակրական ցոյցեր անել փողոցներում, հրապարակների վերայ, թատրոններում և նոյն իսկ եկեղեցիների մէջ: Այդ ցոյցերով ժողովուրդը արտայայտում էր իր բուռն համակրանքը դէպի ապստամբները և խոր ատելութիւն դէպի կառավարութիւնը: Շատ տեղերում ցոյցերը զօրքերով զսպվեցան: Մօրրա զօրապետը աշխատում էր զինաթափ անել Սիցիլիայի բնակիչներին, բայց ինչպէս կառավարութիւնը ինքը խոստովանվում է, փորձը անպտուղ էր, որովհետև ամենալաւ զէնքերը թագցնվում էին ապագայ շարժման համար: Մինչդեռ կղզու վերայ կատարվում էր զինաթափութեան ձևականութիւնը, արդէն մի ուրիշ մեծ ապստամբութիւն ծագեց Հիւսիսում, Մասսա և Կարրար գաւառներում: Ապստամբները մարմարեայ հանքերում աշխատող բանւորներն էին, որոնք հազարներով իրենց ընտանիքների հետ լեռը քաշվեցան և կատարեալ պատերազմ սկսեցին զօրքերի դէմ: Բայց դժբաղդաբար յանկարծակի ցրտերի և մթերքների պակասութեան պատճառով եր-

կար դիմանալ չկարողացան: Մասսա-Կարբարի բանուորներն էլ, որ արիապէս արձագանք տուին իրենց սիցիլիաբնակ եղբայրների ձայնին, յաղթվեցան և այդ գաւառներն էլ զինուորական դրութեան ենթարկվեցան:

Այժմ "խաղաղութիւնը", բռնապետական կարգը տիրում է Սիցիլիայում, տիրում է և Մասսա-Կարրայում. զինուորական դատարանները առաջ են տանում իրենց վայրենի գործը. 20-25 տարի տաժանակիր աշխատանքի են դատապարտում կտրիճ յեղափոխականներին. դատավճիռները հարիւրներով են արձակվում: Բայց ուրիշ շատ գաւառներում, Բօմանիում, Էմիլիում, Պուլլում գիւղացիները խուլ կերպով սպառնում են, իսկ քաղաքներում բանուորները պատրաստ են...

Իտալիան խաղաղ է, ինչպէս մի գերեզման, զինուորական դրութեան մէջ, սև տէրորի շնորհիւ... Բայց մինչև ե՞րբ. երկա՞ր կը տևէ այդ խաղաղութիւնը: Փաստերը ցոյց են տալիս, որ ոչ:

ԻՍՊԱՆԻԱ

—

Փարիզի "Ռէվոլտ" թերթին գրում են.

"Գիտէք, ինչեր են տեղի ունենում այն հրաշալի երկրում, որ Իսպանիա է կոչվում: Ոչ, դուք երբէք չէք կարող երևակայել:

Անգութ հալածանքներ, անասելի չարչարանքներ, ճնշումներ, տանջանքներ, աքսոր, սպանութիւն,- մենք այդ ամենը տանում ենք, մենք, իսպանիայի յեղափոխականներս: Երբ մեր ընկեր Պալլասը ցոյց տուեց բուրժուազական հասարակութեանը, որ արիասիրտ մարդիկ հազար անգամ գերադասում են մահը սարկութիւնից, այդ օրից ի վեր մեզ հալածում են կատաղաբար, ինչպէս չեն հալածում նոյն իսկ վայրենի գազաններին...

Պալլասի գործից յետոյ միայն Բարցելոնում մեր ընկերներից 500-ից աւելի պահում են զինուորական բանտերում:

Անթիւ ձերբակալութիւններ են արվել Մադրիդի, Վալանսի, Սէվիլի, Կադիքսի, Մալագայի, Բիլբայի, Քերեսի մէջ և այլն: Բոլոր բանտարկեալներին վայրենի կերպով ծեծում են, բանտերում ինկվիզիցեան վերականգնեցրել են: Եւրոպական մամուլը մի խօսք անդամ չէ ասում այս ամենի դէմ:"

Ուր արդարութիւնը ոտնակոխ է անվում, այնտեղ առանձին անհատները արդար վրէժխնդրութեան են դիմում: Յունվարի 25-ին, երբ Բարցելոնի ոստիկանապետը պատրաստվում էր կառք նստել, մի բանուոր, Բամոն Մօրել Կասաս անունով ատրճանակով ծաները վիրաւորեց ոստիկանապետին:

ԳԵՐՄԱՆԻԱ

—

Կառավարութիւնը նորից սպառնում է "բացառիկ օրէնքներ" արձակել յեղափոխական բանուորների համար: Բայց յեղափոխական հոսանքը փոխարէն փոքրանալու օրից օր աճում է և արդէն նոր, աւելի յառաջադէմ ընկերավարական տարրեր են առաջացել: Բանուորները աշխատանք չեն գտնում և աշխատանքի պակասութիւնը, որ ընդհանուր է, աւելի ևս վառում է ապստամբական ոգին: Յեղափոխական գաղափարները թափանցել են նոյն իսկ զօրքերի մէջ, որ բռնապետական կառավարութեան հիմքն է կազմում: Ազատամիտ բանուորների և յեղափոխականների հալածանքները աճում են: Զգալով, որ իր ոյժերը կորցնում է, կառավարութիւնը վայրենի խստութիւններ է բանեցրնում: Բայց իշխողների խստութիւնները միայն իրենց մօտակայ անկումն է նախագուշակում: Եթէ մտածելու ընդունակ լինէին, պատմութիւնը բազմաթիւ նոյնօրինակ փաստեր ցոյց կը տար իրենց:

ՌՈՒՄԱՆԻԱ

—

Անցեալ ամիս մի քանի գաւառներում գիւղացիները ապստամբվեցան. նրանք յարձակվել են համայնական խորհրդարանների վրայ և արժանաւոր խրատ տուել տանուտէրներին, որոնք "մաքսիմում" կոչված օրէնքը փորձել են իրագործել: Այդ օրէնքի համեմատ նոր տուրք է դրվում ձմեռուայ համար աղում ու քացախում դրած ուտեստների վրայ: Զօրքերը վրայ են հասնում և մի քանի գիւղերում հասարակ օֆիցէրների հրամանով, առանց որ և է առիթի գիւղացիների կողմից,

գնտակահար են անում գիւղացիներին: Բաղեշտի գիւղում միայն 20 հոգի են ընկնում:

Այդ օրէնքը հրատարակողը ընդհանուր ձայնատուութեամբ ընտրած երեսփոխանական ժողովն է, իսկ զօրքերը՝ ազգային զօրքեր...

Ահա ազգային կառավարութեան առաւելութիւնները:

Դա չի նշանակում, ի հարկէ, որ պէտք է դերադասել օտար կառավարութիւնը: Մենք սկզբունքով դէմ ենք կառավարչական կարգերին և կողմնակից համայնքների կատարեալ ինքնավարութեան:

ՀՈԳԵԿԱՆ ՊԱՀԱՆՋ

Ընկաւ Վալիանը, զոհվեց Զաքարեանը... Օրից օր յեղափոխական նահատակների թիւը աւելանում է, գնալով սաստկանում է բուրժուազական տիեզերական կազմակերպութեան կատաղութիւնը, որ իր զազրելի կեանքը մի քիչ էլ երկարացնելու համար կամենում է արիւն խմելով սնվիլ: Գիլեոտինը մարտիրոսների արիւնով է շաղախվում, բանդերն անբաւական են դառնում, իսկ յեղափոխական շարժումն ընդհակառակ՝ օրից օր տարածվում, մեծանում է: Ինչո՞վ բացատրել այս երևոյթը, որի առաջ նոյն իսկ իրանք դահիճները ապշած ու շուարած են. կոտորում են անխնայ, իսկ զոհը անյողդող դիմում է դէպի մահը յանուն թշուառ մարդկութեան. արհամարական ժպտով նայում է իր դահճի երեսին, մահուան տագնապը չի դողացնում ոչ ոքին: Յեղափոխականը միշտ առաջ է գնում: կառավարութեան ձեռք առած ամեն տեսակ դժոխային միջոցները ոչնչով չեն կարողանում արգելել յեղափոխականներին հարուածել կառավարչական արիւնարբու մեքենան: Յեղափոխականը գործ է ածում իր ամեն հնարը տապալելու համար հարստահարեալ մարդկութեան ոխերիմ թշնամի եղող կառավարչական անխիղճ կազմակերպութիւնը: Յեղափոխականը գնում է առաջ և չի դադարում գործելուց յանուն յեղափոխութեան, մինչև որ դահիճը չի խողխողում նրան, խեղդելով նրա կոկորդում նահատակի այս վերջին ճիչը "կեցցէ՛ յեղափոխութիւն": — Այս իդեալական տիպը ծնվեց աղքատ ժողովրդեան յուսահատ շրջանում, իր մօր ցամաքած կրծքից կաթի տեղ ծծեց թշուառութեան առաջին կաթիլները, իր դժբաղդ կեանքի ամեն քայլափոխում հանդիսատես եղաւ հարստահարիչ սոսկալի տեսարանների և ինքն իր կարգին չարչարվեց ու հարստահարվեց: Մանկական հասակը զարգանալուն հետ, աճեցաւ և իր ատելութիւնը դէպի կառավարչական բռնապետ կազմակերպութիւնը, դէպի անխիղճ կեղեքիչները. նա կատարեալ երիտասարդ դարձաւ, իր գաղափարները և զգացումներն ևս հասունացան. իր նիւթական վիճակը ծանրանալուն հետ, բազմապատկվեց նրա ատելութիւնը իր թշուառութեան աղբիւր եղող կազմակերպութեան դէմ: Այդ օրից օր աճող քէն ու վրէժխնդրութիւնն սկսաւ հրդեհել նրա ուղեղը և բաւականութիւն պահանջել:

Ինչպէս մարմինը, նոյնպէս և մարդուս միտքը ունի իր պահանջները. գաղափարի ծարաւը աւելի սաստիկ է, քան թէ պապակված շրթունքները:

Հարստահարված մարդկութեան սիրտը յեղափոխական ծարաւով տոգորվում է. նա ամեն ինչ զոհելով՝ բաւականութիւն պիտի տայ իր այդ պահանջին: Յեղափոխականը զոհում է ինքն իրան, որովհետև այդպիսով միայն կարող է բաւականութիւն տալ իր գրգռված զգացմունքներին:

Այո՛, յեղափոխութիւնը այժմ հոգեկան մի անդիմադրելի պահանջ է դարձել...

Թերթիս դիմել հետեւեալ հասցէով.

W. Voynich. (Hamaïnk). 3, Iffley Road, 3. Hammersmith, W., London.

Փարիզ. Միջազգային տպարան.